


RFID Ընթերցիչի համապատասխանության ուղեցույց

Միայն հետազոտության օգտագործման համար: Չօգտագործել ախտորոշիչ գործընթացների համար:

RFID Ընթերցիչ մոդուլը, մոդելի համարը՝ TR-001-44, կոմպակտ մոդուլ է, որը նախատեսված է ընդունող սարքում օգտագործման համար՝ բարձր հաճախականությամբ (HF) պիտակների կարճ ընթերցանության համար: Մոդուլը կազմված է ռադիո մոդուլից, հանգուցավոր ալեհավաքից և եզակի 40 մմ x 40 մմ x 6,5 մմ մակերեսով UART ընդունող միջերեսից:

Պատկեր 1 RFID Ընթերցիչ, մոդելի համարը՝ TR-001-44



Պատկեր 2 Ընդունող UART միջերեսով կապակցումներ

J2	1 VCC
	2 TX
	3 RX
	4 RTS
	5 CTS
	6 Gnd

RFID Ընթերցիչի բնութագրեր

Հոսանք	Բնութագիր
Մուտքային լարում	3,3 Վոլտ DC ±5%
Սնուցման հոսանք	120 մԱ

Էլեկտրական	Բնութագիր
Աշխատանքային ջերմաստիճան	0°C-ից 35°C (32°F-ից 95°F)
Պահեստավորման ջերմաստիճան	-20°C-ից 85°C (-4°F-ից 185°F)

Ռադիոհաճախականություն (RF)	Բնութագիր
RF աշխատանքային հաճախականություն	13,56 ՄՀց
RF Ելքային հոսանք	200 մՎտ


Արտաքին ալեհավաք

RFID Ընթերցիչի TR-001-44 մոդուլը (մասի համարը՝ 15043544) կարգավորված է ներքին հանգուցային ալեհավաքի օգտագործման համար: Արտաքին հարմարվող հանգուցային ալեհավաք օգտագործելիս (մասի համարը՝ 15068220), օգտագործեք RFID Ընթերցիչ TR-001-44 մոդուլը (մասի համարը՝ 15067940):

RFID Ընթերցիչ TR-001-44 մոդուլը (մասի համարը՝ 15067940) կարգավորված է փոքր, միաառանցքային միակցիչի հետ՝ արտաքին հարմարվող հանգուցային ալեհավաքը կապակցելու (մասի համարը՝ 15068220) և ներքին հանգուցային ալեհավաքը շրջանցելու համար:

Կապակցեք հանգուցային ալեհավաքի միաառանցքային մալուխը RFID Ընթերցիչի մոդուլի J1-ին:

Պատկեր 3 Արտաքին հարմարվող ալեհավաքով RFID Ընթերցիչ, մոդելի համարը՝ TR-001-44



Արտադրանքի համապատասխանության և կարգավորիչ հայտարարություններ

Համապատասխանության պարզեցված հայտարարություն

Illumina, Inc.-ը սույնով հայտարարում է, որ RFID Ընթերցիչ մոդուլը, մոդելի համար՝ TR-001-44, համապատասխանում է հետևյալ Հրահանգներին՝

- ▶ EMC Հրահանգ [2014/30/EU]
- ▶ Ցածր լարման Հրահանգ [2014/35/EU]
- ▶ Ռադիոսարքավորման Հրահանգ [2014/53/EU]


ԵՄ Համապատասխանության հայտարարության ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ support.illumina.com/certificates.html:

Ռադիոհաճախականության ազդեցությունը մարդկանց վրա

Այս սարքը համապատասխանում է ընդհանուր բնակչության համար առավելագույն թույլատրելի ազդեցության (MPE) սահմանաչափերին՝ համաձայն Անվանում 47 CFR § 1.1310 Աղյուսակ 1-ի:

Այս սարքը համապատասխանում է մարդկանց վրա էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության (EMF-ներ) սահմանաչափերին այն սարքերի համար, որոնք աշխատում են 0 Հց-ից մինչև 10 ԳՀց հաճախականության միջակայքում, որոնք օգտագործվում են ռադիոհաճախականության նույնականացման մեջ (RFID) աշխատանքային կամ մասնագիտական միջավայրում: (EN 50364:2010 բաժիններ 4.0.)

Համապատասխանություն Ֆիլիպինների համար



Համապատասխանություն Ինդոնեզիայի համար



Օգտագործման նախազգուշական միջոցներ

Նախքան RFID Ընթերցիչը և քարտը օգտագործելը կարդացեք հետևյալ նախազգուշական միջոցները: Հետևեք նախազգուշական միջոցներին՝ խուսափելու սխալ օգտագործման հետևանքով առաջացած անսարքություններից և խափանումներից:

▶ **Խուսափեք RFID Ընթերցիչի օգտագործումից ուժեղ էլեկտրամագնիսական ալիքների առկայության դեպքում** — RFID Ընթերցիչը քարտը կամ ներդիրը սնուցում է հոսանքով՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով հաղորդակցվելով քարտի կամ ներդիրի հետ: Ուժեղ էլեկտրամագնիսական ալիքների առկայությունը ազդում է RFID Ընթերցիչի ու քարտի կամ ներդիրի միջև հաղորդակցմանը՝ առաջացնելով նվազեցված մատչելիության տարածք կամ քարտի մատչման անկարողություն: Նախքան օգտագործելը փորձեք RFID Ընթերցիչը՝ տեղադրման վայրում օգտագործելով իրական հոսանքի աղբյուր:

▶ **Հեռու պահեք այն ճշգրտիչ սարքերը RFID ընթերցիչից, որոնք կարող են ենթարկվել էլեկտրամագնիսական ալիքների ազդեցությանը** — Զանի որ RFID Ընթերցիչը մշտապես արտադրում է մոտավորապես 13,56 ՄՀց էլեկտրամագնիսական ալիք, ճշգրտման սարքերը, որոնք կարող են ենթարկվել ընթերցիչի մոտ գտնվող էլեկտրամագնիսական ալիքներին, կարող են առաջացնել սարքերի անսարքություններ և խափանումներ: Ընթերցիչը գործարկելիս հեռու պահեք ճշգրտման սարքերը RFID Ընթերցիչից: Եթե նման ճշգրտման սարքեր պետք է տեղադրվեն RFID Ընթերցիչին մոտ, կադապարեք ճշգրտման սարքերը մետաղական կափարիչով և փորձարկեք սարքերը ցանկացած ազդեցությունը ստուգելու համար:

▶ **Խուսափեք բազմակի RFID Ընթերցիչների՝ միմյանց մոտ տարածությամբ օգտագործումից** — RFID Ընթերցիչը մատակարարում է հոսանք քարտին կամ ներդիրին՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով քարտի կամ ներդիրի հետ հաղորդակցվելով, ինչպես նաև մշտապես արտադրում է մոտավորապես 13,56 ՄՀց էլեկտրամագնիսական ալիք: Միմյանց մոտ տարածության վրա մի քանի ընթերցիչների օգտագործումը առաջացնում է խանգարում, ընդհատում է քարտի և ընթերցիչի միջև հաղորդակցումը և կանխում քարտի մատչումը:

Անվտանգության տեղեկություններ

FCC RF ազդեցության ուղեցույցներին համապատասխանությունը պահպանելու համար, տեղադրեք և գործարկեք այս սարքը ձեր մարմնի և ռադիատորի միջև նվազագույնը 20 սմ հեռավորության վրա:

Օգտագործեք միայն մատակարարված ալեհավաքի հետ: Չլիազորված ալեհավաքները, ձևափոխումները կամ հարմարանքները կարող են վնասել հաղորդիչը և խախտել FCC կանոնակարգերը:

Փոփոխությունների պատմություն

Փաստաթուղթ	Ամսաթիվ	Փոփոխության նկարագրություն
Նյութի համարը՝ 20018408 Փաստաթղթի համարը՝ 100000002699 v03	Հունվար 2018	Ավելացվել է Համապատասխանության պարզեցված հայտարարությունը: Ավելացվել է Ինդոնեզիայի համար համապատասխանության պիտակը: Թարմացվել են Մեքսիկայի համապատասխանության հայտարարությունը և Սերբիայի համապատասխանության նշանը:
Նյութի համարը՝ 20016343 Փաստաթղթի համարը՝ 100000002699 v02	Փետրվար 2017	Ավելացվել է Կորեայի համապատասխանության ռադիո հայտարարություն կորեերեն և անգլերեն լեզուներով: Ավելացվել է Ազգային հաղորդակցության հանձնաժողովի (NCC) նշանը և վկայագրի համարը Թայվանի համապատասխանության համար: Ավելացվել է Ազգային հեռահաղորդակցության հանձնաժողովի (NTC) նշանը և վկայագրի համարը Ֆիլիպինների համապատասխանության համար: Թարմացվել է RATEL համապատասխանության նշանը Սերբիայի հանրապետության համապատասխանության համար: Թարմացվել է ռադիոհաճախականության ազդեցությունը մարդու վրա արտադրանքի ստանդարտի հղման համարը՝ EN 50364:2010:
Նյութի համարը՝ 20006699 Փաստաթղթի համարը՝ 100000002699 v01	Մարտ 2016	Ավելացվել է ճապոներեն թարգմանություն:

Փաստաթուղթ	Ամսաթիվ	Փոփոխության նկարագրություն
Նյութի համարը՝ 20002353 Փաստաթղթի համարը՝ 100000002699 v00	Դեկտեմբեր 2015	Սկզբնական թողարկում:

Հեղինակային իրավունքներ և ապրանքային նշաններ

© 2018 Illumina, Inc.: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Բոլոր ապրանքային նշանները հանդիսանում են Illumina, Inc.-ի սեփականությունը կամ դրանց համապատասխան սեփականատերերինը: Ապրանքային նշանների վերաբերյալ որոշակի տեղեկությունների համար այցելեք www.illumina.com/company/legal.html հղումով: